

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
(Периодический сборник научных статей)

№ 13

**Ереван
Издательство ЕГУ
2017**

**YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES**

**JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)**

№ 13

**YEREVAN
YSU PRESS
2017**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*),
Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն
պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր,
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ-
անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն
պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր,
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով
Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան
Վահրամ պ.գ.թ., Բեյլենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր
(Ռուսաստան), Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ), Գրեկյան
Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր
(Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր
(Ուզբեկստան)

Գալուստյան Ռեզինա¹

**ՂԵՊԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ.
ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ
ՔԱՐՈԶԸ 1911-1913 թթ.**

Բանալի բառեր՝ թուրքական ազգայնականություն, անցյալի վերհանում, պատմական հերոսներ, քարոզչություն, «Թուրք յուրդու», Թուրան

1911-1913 թթ. թուրք-խտալական (Լիբիական, Տրիպոլիտական) և Բալկանյան պատերազմները, դրանց արդյունքում կրած պարտություններն ու տարածքային կորուստները թուրք ազգայնականների համար համապատասխան մթնոլորտ ստեղծեցին թուրքական ազգայնականության սահմանները գծելու և այն քարոզելու համար: «Բալկանյան սինդրոմը» ազդեց իշխող «Միություն և առաջադիմություն» («*İttihat ve Terakki*») կուսակցության քաղաքական գործունեության ուղղվածության փոփոխության վրա: 1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրք գործիչների քաղաքական հայացքներն ավելի ճկուն էին և իրավիճակից ելնելով ներառում էին տարատեսակ գաղափարախոսություններ՝² օսմանիզմ, պան-իսլամիզմ, պան-թուրքիզմ: Պետք է նշել նաև, որ օսմանիզմի և թուրքիզմի միջև

¹ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշախատող, էլ. փոստ՝

galustyan.regina@mail.ru

² St' u Jacob M. Landau, Pan-Turkism: from Irredentism to Cooperation, sec. ed., Indiana University Press, 1995, էջ 47:

սահմանը երիտթուրքերի համար պայմանական էր: Նրանցից շատերը «օսմանյան ժողովուրդ» ասելով նկատի ունեին թուրքերին և թուրքացված մուսուլմաններին, նրանց՝ ովքեր դաստիարակվել էին թուրքական ավանդույթներով և հաղորդակցվում էին թուրքերենով³: Իթթիհաթականների վերաբերմունքը ոչ մուսուլման, հատկապես՝ ոչ թուրք համայնքների նկատմամբ ազգայնական էր: Սահմանադրությունը հիմնված էր բոլոր օսմանյան հպատակների հավասարության սկզբունքի վրա՝ անկախ նրանց էթնիկ կամ կրոնական պատկանելությունից, բայց նրանք բացահայտ խոսում են թուրքի՝ որպես գերիշխող ռասայի և ամեն ինչ և ամեն մեկին թուրքացնելու իրենց երազանքի մասին⁴: Կարճ ժամանակահատվածում օսմանիզմի դոկտրինան՝ հատկապես 1911 թ. սկսած վերափոխվեց ազգայնականության, թուրքացման և լաիցիզմի⁵: 1912 թ. «օսմանցու» տարբերակման մեջ կարևորվում է կրոնը և դրանից դուրս են մնում քրիստոնյա ժողովուրդները⁶: Մուսուլմանական Ալբանիայի ապստամբությունը հարված հասցրեց պան-իսլամիզմին: Դա էր պատճառը, որ թուրքական մտավորականության համար հստակեցվեց թուրքիզմի սահմանները և դյուրին դարձավ դրա քարոզը⁷: Ջեմալ փաշան իր

³ St' u Авакян А., Геноцид армян: механизмы принятия и исполнения решений, Ер., 2013, էջ 32, «Թուրքի» սահմանման մեջ կրթությունը և լեզուն առաջնային էին Գյոթալիի համար (տե՛ս Uriel Heyd, Foundations of Turkish Nationalism: the Life and Teachings of Ziya Gökalp, London, 1950, էջ 63)

⁴ St' u “Armenia”, March, 1912, Vol. V, No. 8:

⁵ St' u “Armenia”, September, 1912, Vol. VI, No. 2, հակառակ կարծիքի մասին տե՛ս Suny Ronald Grigor, Religion, Ethnicity, and Nationalism: Armenians, Turks, and the End of the Ottoman Empire, In God's Name: Genocide and Religion in the Twentieth Century, ed. by Omer Bartov and Phyllis Mack, Berghahn Books, 2001, էջ 23-56.

⁶ St' u Авакян А., նշվ. աշխ., էջ 33:

⁷ St' u Uriel Heyd, նշվ. աշխ., էջ 34: Թուրքիզմի և պան-թուրքիզմի մեջ նույնպես երիտթուրքերը մեծ տարբերություն չէին դնում: Երկու գաղափարախոսություններում էլ թուրքի գերիշող դերը հիմնական գիծն էր: Նույնիսկ Ջեմալ Նուրին (1877-1939 թթ.), որը հայտնի թուրք լրագրող և

հուշերում շեշտում է, որ ինքն իհարկե առաջին հերթին օսմանցի է, սակայն չի մոռանում, որ թուրք է և ոչինչ չի կարող սասանել իր համոզմունքն առ այն, որ թուրքական ռասան է Օսմանյան կայսրության հիմնաքարը և որ այդ պետությունը թուրքերի ստեղծածն է⁸: «Թուրքական օջախներ»-ի ղեկավար Համդուլլահ Սուրիին իր ճառերից մեկում նշում է, որ թուրքիզմը թուրքերին փրկելու իրենց ձեռքի տակ եղած ամենավերջին և ամենաարդյունավետ միջոցն է⁹:

1911-1912 թթ. թուրք-իտալական պատերազմից հետո թերթերը գրում էին Օսմանյան կայսրության հավանական բաժանման մասին, և դա գնահատում որպես պատասխան երիտթուրքերի կայսրությունում տարբեր ազգությունների բռնի ձուլման քաղաքականությանը¹⁰: Ջորջ Հորտոնը, որը 1911-1917 թթ. ԱՄՆ հյուպատոսն էր Ջմյունիայում նշում է. «Մահմանադրության հռչակումից հետո էր, որ «Թուրքիան թուրքերի համար» գաղափարը հստակ ձև ստացավ և վերաճեց այդ նպատակն իրականացնելու ծրագրի՝ այդ արյամբ ներծծված հողից բոլոր քրիստոնյա ժողովուրդների վերջնական ոչնչացմամբ՝ ծրագիր, որը համահունչ էր, և շարունակությունն էր քրիստոնեության հնազույն հայրենիքում մահմեդականների տարածմանը համընդհանուր պատմությանը»¹¹: Բռնի թուրքացման այս քաղաքականությունն

մտավորական էր, 1918 թ. անկեղծանում է, որ շատ քիչ տարբերություն է տեսնում թուրքիզմի և պանթուրքիզմի միջև (նույն տեղում):

⁸ Sté u Djemal Pasha, Memoir of a Turkish Statesman, 1913-1916, George H. Doran Company, New York, 1922, էջ 251, 252:

⁹ Sté u Авакян А., նշվ. աշխ., էջ 33:

¹⁰ Sté u “Armenia”, November, 1911, Vol. V, No. 4:

¹¹ George Horton, The Blight of Asia, an Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers; With the True Story of the Burning of Smyrna, the Bobbs-Merrill Company, 1953, p. 28.

անհանգստացրել է նույնիսկ կայսրությանը համակրող գործիչներին, ինչպես օրինակ բրիտանացի հասարակական գործիչ Ֆրեդերիկ Հարիսոնն էր, որը 1911 թ. հուլիսին թուրքական մամուլում նամակ է տպագրում այն մասին, որ այս քաղաքականության արդյունքում կայսրությունը կկորցնի իր ընկերներին արտասահմանում¹²:

Ցեղասպանության ծրագիրն առաջ է քաշվել որպես չձուլվող տարրերի ազգային խնդիրը վերջնականապես լուծելու միջոց¹³ և իրենց իշխանությունը փրկող երիտթուրքերի, ինչպես նաև բնակչության միակ վստահելի հատվածի՝ օսմանյան մուսուլմանների համար թուրքերի դիրքերի ամրապնդումը և հայրենիքը փրկելու հիմնավորումը վերջնականապես օրինականացրեց ցանկացած տեսակի գործողություն¹⁴: Քրիստոնեաբնակ տարածքների հավանական տարանջատումը կայսրությունից բացառելու նպատակով տեղաբնիկ բնակչության ոչնչացումը որպես լուծում «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների մոտ ձևավորվել է 1911 թ.,¹⁵ սակայն այդ ծրագրի իրագործումը հնարավոր դարձավ միայն 1913 թ. նրանց կողմից իշխանության վերջնական զավթումից հետո¹⁶: 1913 թ. կուսակցության մենիշխանության հաստատումը, քաղաքական մյուս կուսակցությունների գործունեության արգելքը վերջնակետին հասցրին կուսակցության և պետության սերտաճումը, հնարավորություն տալով կուսակցության կողմից

¹² Տե՛ս Jacob M. Landau, նշվ. աշխ., էջ 46:

¹³ Տե՛ս Chirot D., McCauley C., Why Not Kill Them All? The Logic and Prevention of Mass Political Murder, Princeton University Press, 2006, էջ 48:

¹⁴ Տե՛ս Zürcher E. J., The Young Turk Legacy and Nation Building: From the Ottoman Empire to Atatürk's Turkey, I. B. Tauris, NY, 2010, էջ 117:

¹⁵ Տե՛ս “The Orient”, vol. III, No. 44, էջ 5: Երիտթուրքերի 1911 թ. Սալոնիկի IV կոնգրեսի մասին մանրամասն տե՛ս Авакян А., նշվ. աշխ., էջ 43:

¹⁶ Տե՛ս Авакян А., նշվ. աշխ., էջ 7, 10, 53:

ընդունված ցեղասպանության որոշումը իրականացնել պետական համակարգի կողմից¹⁷ :

Գաղափարական առումով թուրքական ազգայնականությունը քարոզելու և երիտթուրքերի իշխանությունն ամրապնդելու գրոծընթացի, ինչպես նաև հետագայում ցեղասպանության նախապատրաստման և իրականացման մեջ հսկայական էր երիտթուրքական ակումբների դերը¹⁸: Բացի այդ, 1911 թ. Սալոնիկում հիմնադրվեց «Թուրքական օջախներ» («Türk Ocağı») կազմակերպությունը, որը թողարկում էր «Թուրք յուրդու» (թուրքական հայրենիք, թուրք.-Türk Yurdu) պարբերականը¹⁹: Կազմակերպությանը կից գործում էր էնվերի կողմից հովանավորվող Izci-ն կամ թուրք բոյսկաուտների ասոցիացիան, որին նույնիսկ այլ մուսուլմանների անդամակցությունն արգելված էր: Ինչպես բրիտանական հետախուզական զեկույցներից մեկն է հայտնում, մուսուլմանական անունները նրա շրջանակներում փոխարինվում էին նախաիսլամականով, աղոթում էին ոչ թե ալլահին, այլ թանրըին, իսկ ըստ ավանդույթի թուրքերի նախահայր Օդուզին ծնունդ տված «սպիտակ գայլը» պատկերված էր սկաուտներին պատկանող ամեն ինչի վրա²⁰: Այդ ակումբների

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 6:

¹⁸ Երիտթուրքական ակումբների դերը ի հայտ եկավ օրինակ՝ 1913-1914 թթ. հույների ապրանքների բոյկոտի և փոքրասիական տարածքներից նրանց արտաքսման ժամանակ (Авакян А., նշվ. աշխ., էջ 18):

¹⁹ Տե՛ս Авакян А., նշվ. աշխ., էջ 29, 30, Jacob M. Landau, նշվ. աշխ., էջ 41: Պարբերականի գործունեության Էդիպի մեկնաբանությունը տե՛ս Halide Edib, Memoirs of Halide Edib, The Century Co., New York, London, 1926, էջ 321, 323, Jacob M. Landau, նշվ. աշխ., էջ 41:

²⁰ Տե՛ս Jacob M. Landau, նշվ. աշխ., էջ 42: Սկաուտիզմի նման զարգացումը կապ ուներ ռուսայի մասին պատկերացումների առաջացման, ինչպես նաև նոր գիտության՝ ֆիզիկական մարդաբանության ծագման հետ, որը մարդկության ռուսայական բաժանման հիմքում դնում էր ֆիզիկական հատկանիշները:

հետ դեռևս 1909 թվականից վիլայեթներում գործում էին կուսակցության բաժանմունքներ, որոնց անդամակցելու պայմաններն էին թուրք լինելը, կրթված լինելը, երիտասարդ տարիքը, բարձր խավի պատկանելը: 1910 թ. սկսած այս պայմաններից առաջինը խստիվ պահպանվում էր²¹:

Թուրքական ինքնության կառուցման ուղղությամբ կառավարության գործնական քայլերին զուգահեռ, 1911-1913 թթ. հայկական մամուլի կողմից լայնորեն սկսել են լուսաբանվել հայերի զինաթափման²², հայերի դեմ մուսուլման բնակչությանը հրահրման, քրդերի զինման²³, հայերի հանդեպ նրանց կամայականությունների²⁴, թալանի²⁵, հայերի սպանությունների²⁶ դեպքերը: Նշվածներից մի քանիսը Հայոց ցեղասպանության իրականացման փաստաթղթային որոշման՝ «Տասը պատվիրանների»²⁷ կետերից են, որոնք ցեղասպանության նախապատրաստական փուլն են կազմում և փաստացիորեն իրագործվել են 1911 թվականից սկսած: 1912 թ. հուլիսին «Արմենիայի» 12-րդ համարը նաև տազնապ է հնչեցնում առ այն, որ

Սկառուտական ակումբները կոչված էին մարզելու ոչ միայն ֆիզիկական, այլև մշակութային հատկանիշները (տե՛ս Leoussi A. S., Myths and ancestry, *Nations and Nationalism* 7 (4), 2001, էջ 468):

²¹ Տե՛ս Авакян А., նշվ. աշխ., էջ 18, 20:

²² Տե՛ս «Առաջամարտ», 1912, թիւ 17, «Աշխատանք», Գ տարի, 1913, թիւ 29:

²³ Տե՛ս «Առաջամարտ», 1912, թիւ 11, «Աշխատանք», Գ տարի, 1913, թիւ 2:

²⁴ Տե՛ս «Աշխատանք», Գ տարի, 1913 թիվ 2, “Armenia”, March, 1912, Vol. V, No. 8:

²⁵ Տե՛ս «Աշխատանք», Գ տարի, 1913, թիւ 23:

²⁶ Տե՛ս «Առաջամարտ», 1912, թիւ 24, թիւ 34:

²⁷ Այս մասին մանրամասն տե՛ս Dadrian V. N., The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians, *Holocaust and Genocide Studies*, vol. 7, Number 2, Fall 1993, էջ 173-201: Թուրքագետ Ա. Ավագյանն առաանձնացնում է երկու գործոն ևս. Բալկանյան պատերազմներից հետո «Թեշքիլաթ-ը մահսուսայի» չցրվելը, ըստ երևույթին այլ խնդիր իրականացնելու նպատակով և 1913 թ. սկսած հայկական նահանգներում նախկինում հայկական ջարդերում «փորձ» ունեցող պաշտոնյաների նշնակվելը (տե՛ս Авакян А., նշվ. աշխ., էջ 60-61):

սպանված հայերի թիվը կտրուկ աճում է, և թերթը դա պայմանավորում է չկարգավորված հողային հարցերով, քանի որ «գողը փորձում է կարգավորել հողային հարցը իրեն հատուկ թուրքական ոճով՝ սպանելով սեփականատիրոջը»²⁸:

Այս ամենի հետ թուրքական ազգային ինքնության կերտման մեջ սկսվեց բնական գործընթաց, որը հետագայում իրականացվելիք ցեղասպանության մեջ ապահովեց և գաղափարական հիմնավորումը տվեց մուսուլման բնակչության զանգվածային մասնակցությունը: Այդ գործընթացն էր թուրքական անցյալի ուսումնասիրումն ու հերոսների ընտրությունը:

Անցյալի վեհացում և հերոսների ընտրություն

Յուրաքանչյուր ազգի կամ էթնիկ միության համախմբան համար օգտագործվում են «ոսկեդարի» մասին պատումները՝ կոլեկտիվ գործողությունների իրականացումն ապահովելու համար: Ազգային ինքնության կառուցման և քաղաքական մոբիլիզացման միջև կապը պահպանվում է հենց այդ պատումների կամ առասպելների միջոցով: Քաղաքական վերանախավն օգտագործում է պատումը հետևորդներին միավորելու, էթնոսի որակները սահմանելու և այդպիսով քաղաքական պայքարը ծանրակշիռ դարձնելու համար²⁹: Գրեթե բոլոր ազգային համախմբան հռետորաբանությունները բաղկացած են երեք

²⁸ “Armenia”, July, 1912, Vol. V, No. 12, «Բացի Հեքքարիի մեջ գոյութին ունեցող մէկ քանի կարետր հողային վեճերէ, կուսակալութեան մէջ որեւէ հողային խնդիր չկայ»-այդպէս կըսէ Վանի կուսակալին կողմէ Բ. Դրան դրկուած հեռագիրը: «Հողային խնդիր գոյութին չունի» ըսել ու հեռագրել մէկ է ըրած Թահսին պէյ» («Աշխատանք», Դ տարի, 16 նոյեմբերի, 1913 թիւ 5):

²⁹St u Levinger M., Lytle F. P., Myth and Mobilization: the Triadic Structure of Nationalist Rhetoric, *Nations and Nationalism* 7 (2), 2001, p. 177, Smith A. D., The Ethnic Origins of Nations, Blackwell Publishing, 1986, էջ 24-25: Ընդհանրապէս Մմիթը յուրաքանչյուր էթնոսի կայացման պրոցեսում կարևորում է առասպելները, հիշողությունները, արժեքները և սիմվոլները (նույն տեղում, էջ 42, 49):

տարրից՝ փառավոր անցյալ, ծանր ներկա և ուտոպիստական ապագա³⁰: Ազգայնական շարժումներն անցնում են քաղաքական պատկերացման ոլորտից գործողության ոլորտ, նրանք ցանկանում են մարդկանց կորած անցյալը վերականգնելու գործին լծելով ստեղծել իդեալական հասարակություն: Հանրույթի անցյալի, ներկայի և ապագայի ոճավորված պատկերների համադրումը ծառայում է երկու հոետորաբանական նպատակի՝ մոտիվացնել լսարանին միանալ կոլեկտիվ պայքարին և սահմանել ազգայնական գործողությունների ուղղությունները ³¹: Թուրքական ինքնության կառուցումը նույնպես կամա թե ակամա կիրառել է ֆրանսիական, գերմանական և իտալական ազգային ինքնությունների կառուցման ժամանակ օգտագործված այս մեթոդը՝ այլ ելքով:

Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին եվրոպական ազդեցության ներքո Օսմանյան կայսրությունում հետաքրքրություն ծագեց թյուրքագիտության և պատմության հանդեպ: Ուսումնասիրողները «վերաբացահայտեցին» իրենց անցյալը՝ «ոսկեդարը», այն դեպքում, երբ այդ անցյալը տանում էր հազարավոր տարիներ հետ և ընդգրկում բոլոր ազգակից ժողովուրդներին: Դրանցից ամենակարևորը Նեջիֆ Ասըմի (1861-1935 թթ.) կողմից թարգմանված Լեոն Կահունի ֆրանսերեն գիրքն էր, որում Թուրանի և մոնղոլների վերաբերյալ մի քանի գլուխներ կային³²: Այս գիրքը հսկայական ազդեցություն է թողել երիտթուրքերի գաղափարախոսության ձևավորման և հետագայում պանթուրքիզմին հարելու նրանց որոշման վրա: Այս աշխատանքը

³⁰ Մյեսման և փուլերի նկարագրությունը տե՛ս Levinger M., Lytle F. P., Myth and mobilization..., էջ 178:

³¹ Տե՛ս նույն տեղում:

³² Տե՛ս Jacob M. Landau, նշվ. աշխ., էջ 30, Léon Cahun, Introduction à l'histoire de l'Asie. Turcs et Mongols des origines à 1405, Paris, 1896, <http://gallica.bnf.fr/ark:/12148/bpt6k30826g>:

թուրքերի մեջ բարձրացրել է հպարտություն իրենց ծագման վերաբերյալ, ինչպես նաև ազդել Կենտրոնական Ասիայի լեզվի և մշակույթի հանդեպ հետաքրքրասիրության աճմանը՝ շեշտելով, որ թուրքերը և մոնղոլները մեկ ասիական ռասա են ներկայացնում³³:

Թուրք-իտալական և Բալկանյան պատերազմները ոչ միայն նպաստեցին անցյալի ուսումնասիրմանը, ազգայնական պատկերացումների ձևավորմանը, այլև թույլ տվեցին մտավորականներին այդ գաղափարները ներարկել հանրությանը՝ ծանր ներկայի պատկերը հակադրելով փառավոր անցյալին: Ինչպես օրինակ գրող Հալիդե Էդիպն է խոստովանում. «Ես 1910-1912 թթ. միջև ընկած ժամանակահատվածը համարում եմ ազգայնականության մեջ վերջնականապես խրվելուս նախաբանը, որն ավելի արագացավ Բալկանյան պատերազմների աղետից հետո»³⁴: Նա նաև շեշտում է, որ եթե չլինեք Լիբիական պատերազմի անարդար ելքը, նրանք հավանաբար չէին արթնանա և չէին դառնա խանդավառ ազգայնականներ³⁵: Նույն կարծիքին է «Թանին» թերթի խմբագիր Հյուսեյն Ջահիդը. «Ներկայիս պատերազմը մեծ պարտություն է Թուրքիայի համար, բայց դա նաև ունեցավ աշխարհի բոլոր թուրքերին և մահմեդականներին լեթարգիայից

³³ Տե՛ս Jacob M. Landau, նշվ. աշխ., էջ 31: Umit Kurt, Dogan Gurpinar, *The Young Turk Historical Imagination in the Pursuit of Mythical Turkishness and its Lost Grandeur (1911-1914)*, *British Journal of Middle Eastern Studies*, 2016, էջ 5:

³⁴ Halide Edib, նշվ. աշխ., էջ 312: Էդիպը Բոսնիա-Հերցեգովինայից և Կրետեից հետո տալիս է հասարակության հոգեվիճակի նկարագրությունը, ինչպես ինքն է գրում՝ «իմ տառապած ցավից ելնելով», նշելով որ տարածքային այդ կորուստները նպաստեցին հայրենասիրական գրականության ծաղկմանը (նույն տեղում, էջ 302):

³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 312:

արթնացնելու նշանակություն: Այն նրանց առջև հստակ դրեց այն վտանգները, որոնց ենթարկվում են»³⁶:

Էդիպը իր ազգայնական հայացքների ձևավորման մեջ առանձնացնում է գաղափարախոսներ Յուսուֆ Աքչուրայի և Զիյա Գյոքալփի հետ հանդիպումը, այդ գործում առանձնացնելով հատկապես Գյոքալփի դերը, որը «տարավ մեզ ռասայական անցյալ և հստակորեն այն օսմանյան անցյալից շատ ավելի հեռու էր»³⁷: Գրող, բանաստեղծ Յահյա Քեմալը (1884-1958 թթ.) գրում է, որ Բալկանյան պատերազմների ընթացքում Փարիզում պատմություն էր ուսումնասիրում: Քրիստոնյա փոքրամասնությունների պայքարը թույլ է տվել նրան գիտակցել, որ այդ պայքարը ոչ թե կարգերի, այլ թուրք ազգի դեմ է, հետևաբար՝ «թուրք ազգ կոչվող մի բան կա»: Այդ պահից նա սկսել է թերթել պատմության գրքերը հասկանալու համար թե ինչ ազգ է դա, և որն է նրա պատմությունը³⁸: Անցյալի ուսումնասիրումը, թուրքի կերպարի վերհանումը դրանից հատուկ չէր միայն Յահյա Քեմալին:

Մշակութային հետաքրքրասիրությունը, ինչպես նաև ճգնաժամային իրադրությունը մտավորական թուրքերի տանում էին դեպի ռասայի ծագման ուսումնասիրության, որի արդյունքում վեր հանվեցին Չինգիզ խանի, Աթիլլայի կերպարները՝ նոր սերնդին քաջալերելու նպատակով: Երիտթուրք մտավորականներ Աքչուրան և Ահմեդ Աղադողլուն՝ երկուսն էլ ծագումով թաթար, 1910 թ. արդարացնում էին Չինգիզ խանին այն մարդկանց դեմ, որոնք նրան չարագործ էին ներկայացնում³⁹: Մեհմեդ Ալի Թեվֆիկը «Գենչ Քալեմլեր» (երիտասարդ գրիչներ, թուրք.-Genç kalemler)

³⁶ Tekin Alp, *The Turkish and Pan-Turkish Ideal*, Liberty Press, London-England, 1993, էջ 18:

³⁷ Halide Edib, նշվ. աշխ., էջ 312:

³⁸ Sî u Şair ve fikir adamı olarak.Yahya Kemal Beyatlı, yayına hazırlayan Osman Oktay, “Türk Ocakları Genel Merkezi”, Ankara, 2008, էջ 8:

³⁹ Sî u Umit Kurt, Dogan Gurpinar, *The Young Turk historical imagination...*, էջ 6:

պարբերականում 1911 թ. տպագրված իր բանաստեղծությունում իտալացիների դեմ պայքարում կոչ է անում Չինգիզի և Աթիլայի հոգիներին, ինչպես նաև թուրքերի մոտալուտ հաղթանակը նմանեցնում Հռոմեական Կայսրության դեմ Աթիլայի տարած հաղթանակին: Նույն հանդեսում տպագրված մեկ այլ բանաստեղծության մեջ Հաքքը Շուհան թուրք-իտալական պատերազմի ժամանակ տալիս է Հռոմը գրավելու նպատակով «երկրորդ Աթիլայի» գալստյան լուրը: Գյոքավիը նույնպես ընթերցողներին հիշեցնում է, որ նրանք Աթիլայի հետնորդներն են: Նրա նման Օմեր Սեյֆեդդինը թուրք-իտալական պատերազմի ընթացքում տպագրված իր պատմվածքներից մեկում հայտնում է. «Աթիլան ոտնատակ էր տվել եվրոպացիներին, ասես նրանք շներ լինեին»⁴⁰: Բալկանյան պատերազմների ընթացքում գրած «Նոր Աթիլա» բանաստեղծության մեջ Գյոքավիը զգուշացնում է Եվրոպային թուրքերի ռազմական ուժի մասին, որոնք պարտության կմատնեն նրանց, ինչպես իրենց նախնի հոները⁴¹:

Ժամանակի թուրք մտավորականներ Յուսուֆ Աքչուրան, Մեհմեդ Էմին Ռասուլզադեն, Իսմայիլ Գասպրիսկին, Ջիյա Գյոքավիը, Հալիդե Էդիպը, Օմեր Սեյֆեդդինը թղթակցելով պարբերականներին ստեղծում էին այդ հերոսներին վեհացնող «ազգային» առասպելական պատումներ և երգեր ձևում Թուրանին՝ պայքարելով ցեղային, ռասայական ու ազգային կապերը վերահաստատելու համար: Պատմությունը ոչ միայն

⁴⁰ Նույն տեղում, էջ 14:

⁴¹ Տե՛ս Uriel Heyd, նշվ. աշխ., էջ 79: Դեմ հանդես գալով հերոսի պաշտամունքին, առաջնային համարելով հասարակությունը և հանրային շահերը, Գյոքավիը, ամեն դեպքում հսկայական դեր է խաղացել ինչպես թուրքական հերոսների վերհանման գործում, այնպես էլ էպոսներ ձևել երիտթուրք և քեմալական քաղաքական, զինվորական առաջնորդներին: Սա փաստում է գաղափարախոսի հակասականությունը:

հպարտության, այլև ազգային իդեալին հասնելու ուղին էր, որն էլ կհանգեցնեք «իդեալի բացակայությամբ պայմանավորված հուսահատության, ծուլության և անտարբերության» վերացմանը⁴²: Աքչուրայի խմբագրության տարիներին «Թուրք յուրդու» պարբերականի առաջնահերթություններ էին նաև Օսմանյան կայսրության թուրքական տարրի քաղաքական և տնտեսական շահերի պաշտպանությունը, իդեալների բացակայության և վատատեսության դեմ պայքարը, օսմանյան թուրքերի մոտ ազգային ոգու ուժեղացումը, արտաքին հարաբերությունները վարելիս թուրքական աշխարհի շահերի գերակայությունը պահպանելը⁴³: Թերթն այս տարիներն անվանվում էր ժամանակաշրջան, երբ «մարդիկ լքում էին օսմանցիությունը և բացահայտում իրենց թուրքականությունը»⁴⁴: Ինչպես Գյոքալփին ինքն է բնութագրում. «Բոլոր թուրքիստները... հանդիպել և աշխատել են միասին «Թուրք յուրդու»-ի և «Թուրքական օջախներ»-ի մթնոլորտում»⁴⁵:

⁴² St' u Umit Kurt, Dogan Gurpinar, *The Young Turk Historical Imagination...*, էջ 9: Սմիթը կարևորում է նաև առասպելաբանությունը նրանով, որ այդ միջոցով էթնոսի համար ապահովվում են «քարտեզներ» և «արժեքներ» (տե՛ս Smith A. D., նշվ. աշխ., էջ 202):

⁴³ St' u Jacob M. Landau, նշվ. աշխ., էջ 42: Ըստ Սհմեդ Էմինի թերթը կառուցում էր «մաքուր թուրքական ազգայնականություն», բարեփոխում էր թուրքերենը, վեր հանում առասպելները և բանահյուսությունը, կապ հաստատում միմյանց հետ թշնամացած կրթված և անկիրթ մասաների միջև: Այս նպատակի համար «Թուրքական օջախներ»-ը հրատարակում էր նույնանուն պարբերականը, ինչպես նաև «Դեպի մասաներ» (թուրք.-Halka Doğru) հավելվածը, որը 1913-1914 վերածվեց շաբաթերթի և խմբագրվում էր Ջելալ Սահիբի կողմից (տե՛ս Ahmed Emin, *The Development of Modern Turkey as Measured by its Press*, New York, 1914, p. 111):

⁴⁴ Umit Kurt, Dogan Gurpinar, *The Young Turk Historical Imagination...*, p. 2, 4.

⁴⁵ Jacob M. Landau, նշվ. աշխ., էջ 42: «Թուրք յուրդու»-ում տպագրված Գյոքալփի հոդվածները 1918 թ. լույս են տեսնում «Թուրքացում, իսլամացում, արդիականացում» գրքի մեջ («Türkleşmek, İslamlaşmak, Muasırlaşmak», Uriel Heyd, նշվ. աշխ., էջ 34):

1911 թ. Գյոքալիք տպագրում է «Թուրան» վերնագրով բանաստեղծություն՝ հրաժարվելով ընդունել Աթիլլայի և Չինգիզ Խանի կերպարները, որոնք, համաձայն հեղինակի, միտումնավոր խեղաթյուրվել են⁴⁶: Համակարծիք լինելով Զիյային, և նշելով, որ նա «կրթված թուրքերի զգացմունքների իրական մեկնիչն է»⁴⁷, Թեկինալիք մեջ է բերում նրա հետևյալ արտահայտությունը. «Տպավորությունները, որոնք հոսում են արյանս մեջ, իմ պատմության արդյունքն են: Ես իմ նախնիների հռչակավոր արարքները չեմ կարդում պատմության գրքերի խունացած փոշոտ թերթերում, բայց իմ սեփական երակներում, իմ սեփական սրտում: Իմ Աթիլլան, իմ Չինգիզը, այս հերոսական կերպարները, որոնք կանգնած են իմ ռասայի վեհ համբավի ետևում, հայտնվում են այս խունացած էջերում մեր չարամիտ և զրպարտիչ դարում՝ պատված ամոթով և անպատվությամբ, երբ իրականում նրանք պակաս չեն Ալեքսանդրից ու Կեսարից: Իմ սրտին ավելի լավ ծանոթ է Օղուզ խանը, պատմության այդ մուր և առեղծվածային կերպարը: Իմ մեջ է նա դեռևս ապրում իր ողջ փառքով և մեծությամբ: Օղուզ խանը հիացնում և ոգեշնչում է իմ սիրտը և ստիպում ինձ երգել

⁴⁶ Տե՛ս Uriel Heyd, նշվ. աշխ., էջ 160: Բանաստեղծությունը տպագրվել է Սալոնիկի «Ռումելի» թերթում Դեմիրդաշ ծածկանունով և «Գենչ քալեմլերում» Թեվֆիկ Սեդաթ ստորագրությամբ (տե՛ս Uriel Heyd, նշվ. աշխ., էջ 126, Jacob M. Landau, նշվ. աշխ., էջ 37, Սաֆարյան Ալ, Զիյա Գյոքալիք և «Թյուրքականության հիմունքները», Եր., 2012, էջ 127): «Թուրան» բանաստեղծությունը թուրքիզմի քարոզչություն է, ի տարբերություն նույն թվականին ավելի վաղ տպագրված «Նոր կյանք և նոր արժեքներ» (1911 թ., «Yeni Hayat ve Yeni Kiyemetler») հոդվածի, որում օսմանիզմը և թուրքիզմը դեռևս զուգահեռ են ներկայացված (տե՛ս Uriel Heyd, նշվ. աշխ., էջ 34): Թուրանի վերաբերյալ ստեղծագործություններ են գրել նաև Մեհմեդ Ալի Թեվֆիկը (տե՛ս Tekin Alp, նշվ. աշխ., էջ 20), Մեհմեդ Էմին Յուրդաքուլը (տե՛ս Jacob M. Landau, նշվ. աշխ., էջ 32), Թեկինալիք (տե՛ս նույն տեղում, էջ 35):

⁴⁷ Գյոքալիքը 1911 թ. գրում է, որ թուրքականության տեսական հիմքն ինքն է տվել (տե՛ս Uriel Heyd, նշվ. աշխ., էջ 110):

ուրախության սաղմոսներ. հայրենիքը թուրքերի համար ո՛չ թուրքիան է, ո՛չ էլ թուրքեստանը: Հայրենիքը մեծ ու հավերժական մի երկիր է՝ «Թուրանը»⁴⁸: «Թյուրքականության հիմունքներում» Ջիյա Գյոքալփը ընդգծում էր, որ «Թուրան» բանաստեղծությունը ժամանակին գրել է՝ խորհելով թուրքականության գաղափարախոսության ծրագրի ստեղծման մասին: Հեղինակի գնահատմամբ՝ այդ բանաստեղծությունը ճիշտ ժամանակին է հրատարակվել, քանի որ «երիտասարդ հոգիները» տեսնելով օսմանիզմի և պանիսլամիզմի վտանգները, փրկության իդեալ էին որոնում. ««Թուրան» բանաստեղծությունն այդ իդեալի առաջին կայծն էր»⁴⁹: Այս գիծը պահպանվում էր Հալիդե Էդիպի կողմից նույնպես, որը գաղափարապես ազդված էր Գյոքալփից: Նրա 1911 թ. տպագրած «Նոր Թուրան» նովելի գլխավոր հերոսը կրում է թուրքերի նախահոր՝ Օդուզի անունը⁵⁰: Նովելում ցույց է տրվում երկու հոսանքների՝ օսմանիզմի և թուրքիզմի հակասությունը, ընդ որում գլխավոր հերոս Օդուզը մարմնավորում է թուրքականությունը⁵¹:

«Թուրք յուրդու»-ին թղթակցող մտավորականների համար թուրքական աշխարհը չունի սահմաններ. «կրկին թուրքերը տարածվում են աշխարհի չորս մասերում՝ արևելք, արևմուտք, հյուսիս և հարավ, ինչպես ջրերը, որոնք հորդում են Ասիայի սրտում բարձրացող Ալթայի լեռներից» ընդգրկելով Չինաստանի, Ֆինլանդիայի, Լեհաստանի, Հունգարիայի և Հյուսիսային Աֆրիկայի ամենահեռավոր մասերը: Գյոքալփը նույնպես առաջ է քաշում Թուրանի պատկերը, որպես թուրքերի ծագման վայր, որն

⁴⁸ Tekin Alp, նշվ. աշխ., էջ 19:

⁴⁹ Սաֆարյան Ալ, նշվ. աշխ., էջ 128:

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 184:

⁵¹ Տե՛ս Umit Kurt, Dogan Gurpinar, The Young Turk Historical Imagination..., էջ 6: Դա նաև Աքչուրայի որդեգրած քաղաքականությունն էր «Թուրք յուրդու» պարբերականում (տե՛ս Jacob M. Landau, նշվ. աշխ., էջ 45):

ունի միայն պետական սահմաններ: Թուրքական պատմության գագաթնակետը նրա համար իհարկե Չինգիզ խանի իշխանությունն էր: Յուսուֆ Աքչուրան 1912 թ. շեշտում է Չինգիզի կայսրության թուրքական բնույթը. «Թաթարը գիտական հասկացություն չէ, այլ ռազմական եզրույթ: Չինգիզի բանակները կազմված էին բացառապես թուրքերից»⁵²: Անցյալի միևնույն տարբերակի նման միահամուռ պաշտպանությունը երիտթուրք գաղափարախոսների կողմից, մեկը մյուսի տեսակետները հիմնավորելը, միևնույն անունը կրող ստեղծագործությունների հրատարակությունը բացառում էր «բազմաթիվ պատմությունների»⁵³ առաջացման հավանականությունը, որը կարող էր վնաս հասցնել նոր կառուցվող ազգային ինքնությանը:

Փառավոր անցյալի վերհանման տեսանկյունից կարևոր է նաև ներկա կորստի ճիշտ վկայակոչումը, օրինակ Էդիպը Բալկաններում կրած պարտությունը անվանում է վերջին հարյուրամյակի ընթացքում թուրքական պատմության մեջ ամենամեծը՝ 3000 մակեդոնական թուրքերի և մուսուլմանների կոտորածով⁵⁴: Պարտությունը և տարածքային կորուստները չեն միայն դեգրադացված ներկայի բնորոշիչները: Այդպիսիք են նաև, սովորաբար միշտ այլ ազգի ներգործությամբ, աղտոտված լեզուն, մշակույթը, թուրքերի պարագայում նաև վնասակար գաղափարախոսությունները, ինչպես օրինակ՝ օսմանիզմը: Վերոնշյալ երկու պարբերականներն էլ՝ «Թուրք յուրդու»-ն և «Գենչ բալեմլեր»-ը հավասարաչափ պայքար էին մղում այս ամենի դեմ:

Անցյալի ուսումնասիրությունը և «ոսկեդարի» հերոսների վերհանումը կարևորվում է նաև այն առումով, որ թույլ է տալիս

⁵² Umit Kurt, Dogan Gurpinar, The Young Turk Historical Imagination..., էջ 7:

⁵³ Smith A. D., նշվ. աշխ., էջ 192

⁵⁴ Sté u Halide Edib, նշվ. աշխ., էջ 333:

առանձնացնել արժանիքներ և հատկանիշներ, որոնք նախկին փառքը վերականգնելու նպատակով ազգը պետք է որդեգրի⁵⁵: Օրինակ ինչպես Էդիպն է գրում. «Ամենակարևոր կետը միշտ եղել է ազգային արժանապատվության պաշտպանությունը: Թուրքերը մինչ այժմ երբեք հող չեն զիջել առանց դրա համար պայքարելու: Հսկայական հողերը, որոնք նրանք ստիպված են եղել զիջելու միշտ ողողվել են թուրքական արյամբ»⁵⁶: Մուսուլմանությունը նույնացվում էր ճշմարտացիության, արդարամտության, գթասրտության հետ: Թուրք ազգայնական մտավորականները 1910 թ. մասամբ վերահաստատեցին, մասամբ էլ վերագտան այս տեսակետը: Օմեր Սեյֆեդդինը գրում էր, որ թուրքերը տարածում էին բարոյականություն և առաջընթաց: «Թուրք յուրդու»-ում տպագրվող հոդվածները ցույց էին տալիս «թուրքական ռասայի հերոսական և վեհ բնույթը»⁵⁷: Հյուսեյն Ջահիդը Թանիմում «Իշխվող տարր և իշխողներ» հոդվածում գրում է, որ քրիստոնյաները մեկընդմիջտ պետք է գիտակցեն թուրքի ուժը և գերիշխանությունը: Նոր ռեժիմի կողմից հռչակված հավասարությունը ուղղակի բառեր էին, որոնք չեն ընդունել հին թուրքերը, չեն ընդունի նաև երիտասարդները⁵⁸: Մեհմեդ Էմին Յուրդաքուլը իր «Անցնելով հունական սահմանը» բանաստեղծության մեջ գրում է. ««Թուրք» բառի մեջ կարծես թե ներփակված է նախնիների ուխտը: Մեր ազգը մանուկ էր, «ես թուրք եմ» ասելով նա մեծացավ: Մենք թուրք ենք և վազում ենք դեպի թշնամին մերկացրած թրով: Ո՞ր մի թուրքը թույլ կտա իր վիզը թոկ և կախաղան գցել: Ո՞ր մի թուրքը թույլ կտա մզկիթի մոտ զանգակատուն կառուցել: Մեր ազգը ստրուկ չի

⁵⁵ Տե՛ս Smith A. D., նշվ. աշխ., էջ 199, 201:

⁵⁶ Halide Edib, նշվ. աշխ., էջ 302:

⁵⁷ Umit Kurt, Dogan Gurpinar, The Young Turk Historical Imagination..., էջ 10:

⁵⁸ Տե՛ս “Armenia”, June, 1912, vol. V, No. 11:

լինելու»⁵⁹: Էմինի բանաստեղծություններում վեհացվում են թուրքը, իսլամը, քարոզվում իրական հայրենասիրություն, ինչպես օրինակ «Ձայն Անատոլիայից» բանաստեղծության մեջ, որը սկսվում է «Թուրք եմ ես, սուրբ է իմ հավատքը» նախադասությամբ և որում հայրենիքն անվանվում է «Աստծո տուն»⁶⁰: Հին թուրքերը, ըստ Գյոքալփի, աչքի են ընկել բազմաթիվ հրաշալի հատկանիշներով. առատաձեռնություն, համեստություն, հավատարմություն, քաջություն, արդարամտություն, և այլն⁶¹:

Բացի իր ազգի ազնիվ ծագման հավատքից, Գյոքալփն արտահայտում է բազմաթիվ ազգայնական շարժումներին հատուկ մեկ այլ՝ մեծ առաքելության առասպելը: Ապագայում վերահաստատվելիք «ոսկեդարը» և դրա ձգտումը նույնն է բոլոր ազգերի մոտ, սակայն տարբեր են ինչպես ներկայի հետընթացի պատճառները, այնպես էլ ուտոպիստական ապագային հասնելու մեթոդները⁶²: Ինչպես թուրքական պատմությունն ապացուցում է Գյոքալփին իր ռասայի բարոյական գերակայությունը, այնպես էլ նա հավատում է, որ թուրք ազգի պատմական առաքելությունն է «իրագործել բարձրագույն բարոյական արժանիքները և ապացուցել, որ այն զոհաբերություններն ու սխրանքները, որոնք, ընդհանուր առմամբ, անհնար են համարվում, մարդկային ուժից

⁵⁹ Гордлевский Вл., Очерки по новой османской литературе, труды по востоковедению, вып. XXXIX, М., 1912, с. 104.

⁶⁰ Տե՛ս և Гордлевский Вл., նշվ. աշխ., էջ 105:

⁶¹ Տե՛ս և Uriel Heyd, նշվ. աշխ., էջ 113:

⁶² 19-րդ դարում գերմանական ազգայնականության և պետականաստեղծ օղակների կողմից օգտագործվող ուտոպիստական ապագայի, այն է՝ հասարակության ներդաշնակ ինտեգրման, համընդհանուր ոգու մոբիլիզացման, միատարր պետության ստեղծման և ռասայական մաքրության վերաբերյալ մանրամասն տե՛ս և Levinger M., Lytle F. P., Myth and Mobilization..., էջ 184-185:

վեր չէն»⁶³: Այս առումով Թեկինավիը արժևորում է Գյոքալվիի «Կարմիր խնձոր»⁶⁴ պոեմը՝ թուրքերի պատմական մեծությունը ցույց տալու տեսանկյունից. «Երբ թուրքն ասում է «Ես կփնտրեմ կարմիր խնձորը», նրա ձգտումն է փնտրելու ազգային միասնություն, ազգային ինքնագիտակցություն և ազգային ուժ, գիտակցումով, որ մեկ օր ազգային առողջ բանականությունը կգերիշխի»⁶⁵:

Բոլոր ազգայնականներն են կոչ անում համընդհանուր պայքարի և նախկին փառքի վերականգնման: Հերոսական կերպարների ու անցյալի վեհացման պատումները մեծապես կանխորոշում են ձեռնարկվելիք քայլերը⁶⁶, որոնք մեծ մասամբ ընտրում է հենց ազգի վերնախավը, ընդ որում հետևորդներ ձեռք բերելուց հետո, վերնախավը կարող է վերաիմաստավորել ազգին անկման տանող գործոններ՝ ազդելով նաև կոլեկտիվ գործողության վրա⁶⁷: Ինչպես պատմական սոցիոլոգ Էնտոնի Սմիթն է նշում, «ազգային առասպելաբանությունը» և «Էթնիկ ծագման մասին առասպելը» քարացած երևույթներ չեն: Այն ներկայացնող պատմաբանների և մտավորականների համար գլխավորը դրանք ներկայացնելիս գիտականությունը կամ անաչառությունը ապահովելը չէ: Ազգաստեղծ վերնախավի համար խնդիրը միավորող համընդհանուր «անցյալի» ապահովումն է, որը իրենց ազգակիցներին կտա ներկա իրավիճակը բացատրող և էլքեր առաջարկող էմոցիոնալ առումով նրանց բավարարող

⁶³ Uriel Heyd, նշվ. աշխ., էջ 114:

⁶⁴ Տե՛ս Սաֆարյան Ալ., նշվ. աշխ., էջ 145-147:

⁶⁵ Umit Kurt, Dogan Gurpinar, *The Young Turk Historical Imagination...*, էջ 13-14: Առաջին անգամ տպագրվել է «Թյուրք յուրդու» հանդեսում 1913 թ. (տե՛ս Սաֆարյան Ալ., նշվ. աշխ., էջ 145):

⁶⁶ Տե՛ս Levinger M., Lytle F. P., *Myth and Mobilization...*, էջ 185, 187: Հետքորդական է նաև այն հանգամանքը, որ կոլեկտիվ գործողություններին մասնակցելով է պայմանավորված պատկանելությունը ազգին (տե՛ս նույն տեղում, էջ 188):

⁶⁷ Տե՛ս Levinger M., Lytle F. P., *Myth and Mobilization...*, էջ 190:

հաշվետվություն⁶⁸: Հյուսեյն Ջահիդը երիտթուրքերի իշխանության զավթումից⁶⁹ անմիջապես հետ վերադառնալով եվրոպական տարագրությունից «Թանին»-ում 1913 թ. գրում է. «Ապստամբությունից առաջ իմ որոշ ընկերներ ինձ հարցնում էին «դու քո նախահայրերի որդին չե՞ս»: Քո հայրերը գիտեին ինչպես մեռնել Հայրենիքի համար... Ապստամբությունը հուսադրեց ինձ, քանի որ ապացուցեց նրանց, որոնք պնդում էին թե թուրքերը մեռած են, իմ երկրում բարոյական եռանդի գոյությունը և ցույց տվեց, որ թուրքերը ցանկանում են ապրել»: Խմբագիրը հրաշալի կանխատեսում է անում նաև ապագայի համար. «Ներկայիս պատերազմը անպատճառ պետք է որպես արդյունք ունենա մեր ներքին քաղաքականության փոփոխությունը: Եթե պատերազմն այսօրվա հարց է, եկեք չմոռանանք, որ վաղը դա կլինի հայկական հարցը կամ արաբական հարցը»⁷⁰:

Անցյալի, ներկայի և ուտոպիստական ապագայի պատկերների քննությունը, անցյալի՝ «ոսկեդարի» ուսումնասիրությունը 1911-1913 թթ. թուրքերին յուրօրինակ ինքնավստահություն ներշնչեց: Ցեղապանությանը տանող այս նախնական փուլում կարևորվում է նաև հերոսների ընտրության հարցը: Պատմական հատուկ կերպարների (օրինակ՝ Չինգիզ խանի) վեհացումը ուղղակիորեն ազդում էր նոր ձևավորվող թուրք էթնոսի բարոյականության ընկալման վրա: Օրինակ բալկանյան պարտություններից հետո բանաստեղծ Ջենաբ Շեհաբեդդին բեյը, 1913 թ. հուլիսի 7-ին «Ազիմ» օրաթերթում «Նամակ իմ որդուն» խորագրով հոդվածում, հանգում է այն եզրակացությանը, որ թշնամու դիմաց կանգնած յուրաքանչյուր զինվոր պետք է

⁶⁸ Smith A. D., նշվ. աշխ., էջ 191:

⁶⁹ St' u "The Orient", vol. IV, No. 5, January 29, 1913, էջ 1-2:

⁷⁰ "The Orient", vol. IV, No. 6, February 5, 1913, p. 4.

վերադառանա բարբարոսության դարաշրջան, այն է՝ ունենա արյան ծարավ, անգույթ լինի կանանց և երեխաներին, ծերերին և թույլերին կոտորելիս, չհարգի ուրիշների ունեցվածքը, կյանքը ու պատիվը, և խոսքն ավարտում կոչով. «Թո՛ղ որ մենք տարածենք արյուն, տառապանք, չարիք և սուգ»⁷¹: Իսկ պետական մակարդակով՝ մամուլի միջոցով շեշտվում էր այն, որ հանուն հայրենիքի փրկության և պայծառ ապագայի արվելիք զոհողությունների մեջ անհնարին ոչինչ չկա: Դա կանխորոշում էր այն թույլատրելիի սահմանը, որը թուրք հանրությունը հարկ եղածի դեպքում կարող է և պետք է հատեր:

**TOWARDS THE CONSTRUCTION OF TURKISH
NATIONAL IDENTITY: THE STUDY AND PROPOGATION OF
TURKIC PAST IN 1911-1913
(summary)**

Galustyan Regina

The article deals with the "revival" process of the Turkish history in 1911-1913 and the impact it might have on the Turkish society. The defeats in Italo-Turkish (Libian, Tripolitanian) and Balkan wars of the period and further territorial losses created a favorable environment for the Turkish nationalist elite to draw the borders of the Turkish nationalism, and to propagate it to the society. The studies of Turkic historical past and revealing the Turkish heroes from the past was a part of this nation-building process. Almost all the national rhetorics of different peoples consisted of three elements: glorious past, heavy present, and utopian future. And the aim of the Turkish nationalists was

⁷¹ Ahmed Emin, նշվ. աշխ., էջ 108:

to mobilize people through the narratives about glorious past and to motivate people to reach the bright future.

In the present study is pointed out that selection of the heroes was also important in this pre-genocidal period. Special historical characters of Turkic origin (Genghis Khan, Attila) had an impact on the newly emerging collective perception of the morality of Turkish ethnos. These bloody heroes from the past marked the rules of conduct and also showed the Turks, that there is nothing impossible for the sake of the homeland and the bright future of the nation.

**К КОНСТРУИРОВАНИЮ ТУРЕЦКОЙ НАЦИОНАЛЬНОЙ
ИДЕНТИЧНОСТИ: ИССЛЕДОВАНИЕ И ПРОПАГАНДА
ТЮРКСКОГО ПРОШЛОГО В 1911-1913 гг.**

(резюме)

Галустьян Регина

В статье рассматривается вопрос «возрождения» турецкой истории в 1911-1913 годах и о влиянии, которое она могла бы оказать на турецкое общество. Поражения в итало-турецких (ливийских, триполитанианских) и балканских войнах этого периода и дальнейшие территориальные потери создали благоприятную среду для турецкой националистической элиты, чтобы начертать границы турецкого национализма и пропагандировать его обществу. Изучение турецкого прошлого и определение турецких героев было частью этого процесса конструирования нации. Почти все национальные риторикеры разных народов состоят из трех элементов: славное прошлое, тяжелое настоящее и утопическое будущее. И цель националистов состоит в

мобилизации людей на основе нарратив о славном прошлом и мотивировании их достичь светлого будущего.

В настоящем исследовании указывается, что выбор героев был также важен в этот предгеноцидный период. Конкретные тюркские исторические персонажи (Чингисхан, Аттила) оказали влияние на *формирующуюся* коллективное восприятие нравственных ценностей турецкого этноса. Эти кровавые герои из прошлого обозначили правила поведения, а также показали туркам, что нет ничего невозможного ради родины и светлого будущего нации.